

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Կառավարության և Չեխիայի Հանրապետության Կառավարության միջև մշակույթի, կրթության, գիտության, երիտասարդության և սպորտի բնագավառներում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Չեխիայի Հանրապետության Կառավարությունը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,

ցանկանալով զարգացնել Պայմանավորվող կողմերի պետությունների միջև փոխշահավետ համագործակցությունը մշակույթի, կրթության, գիտության, երիտասարդության և սպորտի բնագավառներում,

համոզված լինելով, որ այդ համագործակցությունը կնպաստի փոխադարձ իրազեկությանը և ըմբռնմանը և, այդպիսով, Պայմանավորվող կողմերի պետությունների միջև բոլոր հարաբերությունների ամրապնդմանը,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Պայմանավորվող կողմերը պետք է հավասարության, փոխադարձության և փոխշահավետության սկզբունքների հիման վրա զարգացնեն համագործակցությունը մշակույթի, կրթության, գիտության, երիտասարդության հարցերի և սպորտի բնագավառներում և այդ նպատակով նպաստեն Պայմանավորվող կողմերի պետությունների մշակութային, կրթական, գիտական, երիտասարդական և մարզական հաստատությունների միջև ուղղակի կապերին:

Հոդված 2

Սույն Համաձայնագրով համագործակցությունը պետք է զարգանա Պայմանավորվող կողմերի պետություններում գործող օրենքներին և կանոնակարգերին համապատասխան:

Հոդված 3

Մշակութային համագործակցության բնագավառում Պայմանավորվող կողմերը պետք է մասնավորապես աջակցեն.

ա) մյուս Պայմանավորվող կողմի պետության տարածքում սկիզբ առնող կամ այդ տարածքի մշակույթի մաս կազմող գրականության տարածմանը,

բ) գործընկերների միջև՝ մշակույթին ու արվեստին առնչվող գրքերի, փաստաթղթերի և այլ հրապարակումների փոխանակումներին,

գ) դասախոսությունների, ցուցահանդեսների և արվեստի այլ միջոցառումների կազմակերպմանն այնպիսի հաստատությունների կողմից, ինչպիսիք են թանգարանները, պատկերասրահները, թատրոնները, գրադարանները, երաժշտական խմբերը և մյուս կազմակերպությունները, որոնք զբաղվում են նման գործունեությամբ,

դ) թատրոնի, գրականության, կինոյի, թանգարանների, գեղարվեստի, մշակութային ժառանգության պահպանության բնագավառում տեղեկատվության ու փորձի փոխանակմանը և նման բնագավառի փորձագետների միջև ուղղակի կապերին,

ե) երկու պետություններում կազմակերպվող փառատոներին և նմանատիպ այլ միջոցառումներին խմբերի, արտեփաստերի, դասախոսների, ժյուրիի անդամների, դիտորդների փոխանակմանը՝ պահպանելով յուրաքանչյուր առանձին իրադարձու թյան հայեցակարգում և կանոններում ամրագրված պայմանները՝ ներառյալ ոչ մասնագիտական արվեստի գործունեությունը:

Հոդված 4

Կրթության բնագավառում Պայմանավորվող կողմերը պետք է մասնավորապես աջակցեն.

ա) բոլոր մակարդակներում դպրոցների միջև ուղղակի համագործակցությանը,

բ) տեղեկատվության, մանկավարժական և մեթոդական հրապարակումների ու այլ ուսումնական նյութերի փոխանակմանը,

գ) չեխերենի և հայերենի ուսուցմանը՝ հիմնականում ուսումնական նյութերի փոխանակման միջոցով, դասախոսների ուղարկմանը և Պայմանավորվող կողմերի պետությունների ազգերի լեզուների և մշակույթի վերաբերյալ դասընթացների կազմակերպմանը,

դ) բարձգրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների ու դասախոսների փոխանակմանը:

Հոդված 5

Պայմանավորվող կողմերը պետք է աջակցեն համագործակցությանը գիտության, հետազոտությունների և զարգացման բնագավառում, մասնավորապես.

ա) բարձրագույն ուսումնական և հետազոտական հաստատությունների միջև ուղղակի համագործակցությանը,

բ) գիտական և տեխնիկական տեղեկատվության փոխանակմանը,

գ) սեմինարների և այլ միջոցառումների կազմակերպմանը, որոնք նպաստում են գիտական իրազեկության և տեղեկատվության փոխանակմանը:

Հոդված 6

Երիտասարդության և սպորտի բնագավառներում համագործակցության և կապերի զարգացման նպատակով Պայմանավորվող կողմերը պետք է մասնավորապես աջակցեն.

ա) երիտասարդների և երիտասարդական կազմակերպությունների միջև համագործակցությանը,

բ) երիտասարդության հարցերի վերաբերյալ տեղեկատվության և փորձի փոխանակմանը,

գ) Պայմանավորվող կողմերի պետությունների սպորտային կազմակերպությունների միջև համագործակցությանը,

դ) Պայմանավորվող կողմերի պետությունների մարզիկների մասնակցությանը մյուս Պայմանավորվող կողմի պետության տարածքում կազմակերպվող սպորտային միջոցառումներին,

ե) երիտասարդության և սպորտի բնագավառներում Պայմանավորվող կողմերի պետությունների իրավասու մարմինների կողմից՝ Պայմանավորվող կողմերի ներքին օրենքներին և կանոնակարգերին համապատասխան որոշված ցանկացած այլ գործունեության:

Հոդված 7

Սույն Համաձայնագրի կիրարկման նպատակով Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինները կարող են կնքել համագործակցության ծրագրեր կամ արձանագրություններ՝ նախատեսելու համար կոնկրետ միջոցառումներ և կարգավորելու նման համագործակցության ձևերն ու պայմանները:

Պայմանավորվող կողմերի իրավասու մարմինները դիվանագիտական ուղիներով կարող են համաձայնություն ձեռք բերել առանձին համատեղ աշխատանքների և դրանց կազմակերպման ձևերի շուրջ:

Հոդված 8

Սույն Համաձայնագիրը չի խոչընդոտում դրանում ներառված համագործակցության ձևերից բացի այլ ձևերի նախաձեռնման հնարավորությունը:

Հոդված 9

Սույն Համաձայնագիրը ենթակա է հաստատման երկու Պայմանավորվող կողմերի ներքին օրենքներին և կանոնակարգերին համապատասխան: Պայմանավորվող կողմերը պետք է դիվանագիտական հայտագրերի միջոցով միմյանց տեղեկացնեն այդ հաստատման մասին: Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Պայմանավորվող կողմերից մեկի կողմից մյուս Կողմին վերջին հայտագիրն ուղարկվելու օրվանից:

Հոդված 10

Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է դադարեցնել դրա գործողությունը գրավոր ծանուցման միջոցով: Համաձայնագրի գործողությունը դադարում է մյուս Պայմանավորվող կողմին այդպիսի մտադրության մասին ծանուցում ուղարկելու օրվանից վեց ամիս հետո: Սույն Համաձայնագիրը ոչ մի ազդեցություն չի թողնում Պայմանավորվող կողմերի՝ այլ վավերական միջազգային համաձայնագրերի ներքո իրավունքների և պարտականությունների վրա:

Կատարված է ք. Երևանում 2010 թվականի դեկտեմբերի 10-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, չեխերեն և անգլերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Մեկնաբանման ընթացքում որևէ տարաձայնության դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2011թ. ապրիլի 15-ին